

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ

ՆԱԽԱՍՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Ապարանում Արևային ՖՎ համակարգի տեղադրում

(Պայմանագիր՝ NCS-1/2018)

ԲԱԺԻՆ Ա.՝ ՆԱԽԱՍՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ /ՆՄՀ/ ՀՐԱՎԵՐ

Ծրագրի անվանումը՝	<u>Եվրամիությունը հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի ծրագիր (EU4ASEP)</u>
Ծրագրի կառավարող՝	<u>Էներգախնայողության աջակցման հիմնադրամ</u>
Հիմնական շահառու՝	<u>Ապարանի համայնքապետարան</u>
Ֆինանսավորման աղբյուր՝	<u>Եվրամիության կողմից տրամադրված դրամաշնորհ (EU4Energy)</u>

Որպես տնտեսական աճի և կլիմայի կայունության իր ռազմավարության հիմնական բաղադրիչ, Ապարանի քաղաքապետարանը հանձնառու է կայուն էներգիայի կիրառման ընդունմանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացմանը տեղական մակարդակում:

Այդ կապակցությամբ, Էներգախնայողության աջակցման հիմնադրամը (ԷՄՀ), սույնով, Եվրամիության ֆինանսավորմամբ “Եվրամիությունը հանուն Հայաստանի կայուն էներգետիկայի” ծրագրի (EU4ASEP) շրջանակներում, հրավիրում է Հայաստանի Հանրապետությունում իրավական գրանցում ունեցող համապատասխան որակավորմամբ կազմակերպություններին՝ ներկայացնելու նախագծման և շինարարության աշխատանքների/ոչ-խորհրդատվական ծառայությունների մատուցման (EPC պայմանագիր՝ Նախագծում, Գնումներ, Շինարարություն) Նախամրցութային հայտ՝ *Ապարան քաղաքի երկու տեղավայրերում արևային ֆոտովոլտային /ՖՎ/ էներգետիկ համակարգ(եր)ի տեղադրման համար, այն է.*

1. **20 կՎտ արևային ՖՎ էներգետիկ համակարգ Համայնքապետարանի շենքում;**
2. **10 կՎտ արևային ՖՎ էներգետիկ համակարգ Մշակույթի կենտրոնում (այսուհետ՝ վերջնական սպառողներ)**

Երկու համակարգերն էլ պետք է ցանցին միացվեն և գործեն ցանցի հետ փոխհաշվարկի հիման վրա (ներ-միթրքինգ):

Ծառայություն մատուցող կազմակերպությունների համար առաջարկվող աշխատանքների շրջանակն ընդգրկում է (բայց չի սահմանափակվում) հետևյալը.

- i) մանրամասն տեխնիկական նախագծում;*
- ii) արևային ՖՎ համակարգերի և մոնտաժային բաղադրիչների գնում և փոխադրում;*
- iii) արևային էներգիայի համակարգի տեղակայում;*
- iv) համակարգի փորձարկում և շահագործման հանձնում;*
- v) շահագործման աջակցություն՝ գործարկելուց հետո մեկ տարվա ընթացքում:*

Բոլոր անհրաժեշտ Տեխնիկական բնութագրերը նկարագրված են Մրցութային փաստաթղթերում, որոնք կտրամադրվեն այս հայտարարության արդյունքում ընտրված և կարճ ցանկում ընդգրկված ընկերություններին:

Որակավորման չափանիշներ

Հետևյալ չափանիշները (առանց որոշակի հերթականության) կկիրառվեն ներկայացված ՆՄՀ գնահատման և կարճ ցանկի կազմման համար.

- ա) Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը),
- բ) Ընկերության տարեկան շրջանառությունը,
- գ) Նմանատիպ ծառայություններ մատուցելու՝ ընկերության առանձնահատուկ փորձը (պայմանագրերի քանակը, տեղադրված հզորությունը, պայմանագրի չափը՝ ՀՀ դրամով);
- դ) Անձնակազմի որակավորումը (առաջարկվող պայմանագրի համար նախատեսված մասնագիտական անձնակազմ՝ ըստ իրենց իրավասությունների և գործառույթների:

Կարճ ցուցակում ընդգրկված ընկերությունները կհրավիրվեն ներկայացնել միասնական տեխնիկական-ֆինանսական առաջարկ:

Նախամրցութային կոնֆերանս և այցելություն տեղանք

ՆՄՀ հայտերի և հետագայում մրցութային առաջարկների պատրաստման գործում հավանական հայտատուներին աջակցություն ցուցաբերելու նպատակով նախատեսվում է նախամրցութային կոնֆերանս և այցելություն արևային համակարգերի տեղակայման վայր: Կոնֆերանսը տեղի կունենա 2018թ. հոկտեմբերի 24-ին, ժամը 11:00-ին՝ Ապարանի քաղաքապետարանում: Կոնֆերանսից անմիջապես հետո նախատեսվում է այցելել համապատասխան տեղանքներ՝ շահառուների ուղեկցությամբ: Բոլոր շահագրգիռ ընկերությունները հրավիրվում են մասնակցելու:

ԲԱԺԻՆ Բ. ԱՐՁԱԳԱՆՔ ՆՄՀ ՀՐԱՎԵՐԻՆ

ՆՄՀ ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացնել հետևյալ 5 ձևերը/աղյուսակները (**Բաժին Գ՝ ՆՄՀ հայտի ներկայացման ձևաչափ**) և կցել ցանկացած լրացուցիչ օժանդակ տեղեկատվություն (բոլոր հավելվածների համար ընդհանուր 20 էջ սահմանաչափով՝ չհաշված ֆինանսական հաշվետվությունները).

1. ՆՄՀ-ին կից գրություն
2. Առաջնորդող հայտատուի նկարագրություն
3. Հայտատուի ներկայացուցչի (Կոնսորցիումի առաջնորդող անդամի) մանրամասները

4. Հայտատուի և/կամ կոնսորցիումի Տեխնիկական որակավորումը
5. Հայտատուի և/կամ կոնսորցիումի Ֆինանսական կարգավիճակը (Հաշվի քաղվածք, Հաշվեկշիռ, Դրամական հոսքեր և Եկամուտների հաշվետվություն)
6. Առանցքային մասնագիտական անձնակազմի ինքնակենսագրական բնութագրերը (CV):

ՆՄՀ հայտը պետք է ներկայացվի **2018թ. հոկտեմբերի 29-ին, մինչև ժ. 17:00**, կամ էլեկտրոնային տարբերակով, կամ 2 տպագիր օրինակ (1 ստորագրված և կնքված բնօրինակ + 1 պատճեն), հասցեագրված՝

Ում՝ Տիկին Աստղինե Պասոյան,
Տնօրեն
Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
Էլ. փոստ՝ apasoyan@esfarmenia.org; astghine@gmail.com

Հետևյալ հասցեով՝

Երևան 0010, Հայաստան
26/1 Վազգեն Սարգսյան փող., Գրասենյակ #414
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն
Ընդունարան՝ +374 10 510451
Բջջային՝ +374 93 611619

Էլեկտրոնային տարբերակով ՆՄՀ հայտերի ներկայացումը, ինչպես նաև ՆՄՀ գործընթացի կամ բովանդակության վերաբերյալ պարզաբանում ստանալու հարցումները պետք է ներկայացվեն միայն գրավոր՝ ուղղված հետևյալ երկու կոնտակտային անձանց.

- 1) Տիկին Աստղինե Պասոյան,
Տնօրեն
Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
Էլ. փոստ՝ apasoyan@esfarmenia.org; astghine@gmail.com
Բջջային՝ +374 93 611619
- 2) Տիկին Թամարա Բաբայան,
EU4ASEP Ծրագրի ղեկավար
Էլ. փոստ՝ tbabayan@esfarmenia.org
Բջջային՝ +374 95 930030

ԲԱԺԻՆ Գ՝ ՆՄՀ ՆԵՐԿԱՅԱՅՆՆԵԼՈՒ ԶԵՎԱԶԱՓԸ

Համառոտ՝ Նախամրցութային հայտի մասին

Ծրագիր	EU4ASEP
Գտնվելու վայրը	Ապարան, Հայաստան
Պատվիրատու	Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
Հայտատուների մասնակցության իրավասությունը	Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված բոլոր ընկերությունները, որոնք իրավասու են ծառայություններ մատուցել Հայաստանի իրավակարգավորման դաշտի ներքո:
ՆՄՀ ներկայացման ամսաթիվը	29 հոկտեմբերի, 2018թ.
Էլ. Փոստ	apasoyan@esfarmenia.org , astghine@gmail.com և tbabayan@esfarmenia.org
Ընտրության գործընթացը	Փուլ 1՝ Նախամրցութային հայտ (ՆՄՀ);

	<i>Փուլ 2՝ Մրցութային առաջարկի ներկայացում;</i>
ՆԱՀ բովանդակությունը	<ol style="list-style-type: none"> 1. Ուղեկից գրություն 2. Առաջնորդող հայտատուի նկարագրություն 3. Հայտատուի ներկայացուցչի /Կոնսորցիումի առաջնորդող անդամի մանրամասները 4. Հայտատուի ն/կամ կոնսորցիումի Տեխնիկական որակավորումները 5. Հայտատուի ն/կամ կոնսորցիումի Ֆինանսական կարգավիճակը 6. Ներգրավված մասնագիտական անձնակազմի ինքնակենսագրականները (CV):

Նշում՝ ՆԱՀ բոլոր նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

1 Նախամրցութային հայտին կից գրություն

(Հայտատուի/Առաջնորդող անդամի Բլանկի վրա)

Ում՝ Տիկին Աստղինե Պասոյան,
Տնօրեն
Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
Էլ. փոստ՝ apasoyan@esfarmeria.org;
Բջջային՝ +374 93 611619

Հասցե՝

Երևան 0010, Հայաստան
26/1 Վազգեն Սարգսյան փող., Գրասենյակ #414
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն
Ընդունարան՝ +374 10 510451

Թեմա՝ Նախամրցութային հայտ Արևային ՖՎ համակարգի տեղադրում

Ապարանում (Պայմանագիր՝ NCS-1/2018).

Հարգելի Տիկին,

Ի պատասխան 17.10.2018թ. հրապարակված **Ապարանում Արևային ՖՎ համակարգի տեղադրման (Պայմանագիր NCS-1/2018)** համար Նախամրցութային հայտերի Հրավերի, մենք _____ (այսուհետ՝ Հայտատու) ցանկանում ենք արտահայտել մեր հետաքրքրությունը՝ ձեռնարկելու Նախամրցութային հայտերի Հրավերում նշված միջոցառումները: Ցուցումների համաձայն, առդիր ներկայացնում ենք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (*ընդհանուր XX էջաքանակով*), տրված ուղեցույցներին/ձևաչափին համապատասխան, ձեր տեղեկությունների և գրառումների համար:

Հարգանքով,

(Ստորագրություն)

Անուն և Պաշտոն՝

Կնիք՝

Ամսաթիվ՝

Հասցե, կոնտակտային տվյալներ

2 Առաջնորդող հայտատուի նկարագրություն

1. Կազմակերպության անվանումը՝
2. Գլխամասային գրասենյակի հասցեն՝
3. Հաղորդակցության համար պատասխանատու աշխատակցի անունն ու պաշտոնը՝
4. Կոնտակտային համար՝
5. Էլ. փոստ՝
6. Կազմակերպության ղեկավար
 - a. Անուն՝
 - b. Կոնտակտային համար՝
 - c. Էլ. փոստ՝
7. Կազմակերպության տեսակը՝
8. Գործունեության հիմնական ուղղությունները՝
9. Աշխատակիցների ընդհանուր թիվը՝
10. Մասնաճյուղերը/Գլխամասերը և դրանց հասցեները՝
11. Դուստր ձեռնարկություններ և ասոցիացված ընկերություններ (*որտեղ կիրառելի է*):
(Մանրամասները հետևյալ ձևաչափով պետք է տրամադրվեն բոլոր ասոցիացված կազմակերպությունների համար) –
 - a. Ընկերության անվանումը
 - b. Ընկերության հասցեն
 - c. Բիզնեսի բնույթը
 - d. Ընկերության հակիրճ նկարագրություն (100 բառից ոչ ավել)
 - e. Վեբ կայք
12. Հայտատուի ցանկությամբ ներառելի լրացուցիչ այլ տեղեկատվություն՝

Վայր՝

Անուն և Ստորագրություն՝

Ամսաթիվ՝

Պաշտոն՝

Ընկերության կնիքը՝

3 Հայտատուի ներկայացուցչի /Կոնսորցիումի առաջնորդող անդամի մանրամասն տվյալները

Ընկերության/ֆիրմայի անվանումը	
Աշխատակցի անունը՝	
Ծննդյան ամսաթիվը (Օր/Ամիս/Տարի)՝	
Ընկերությունում / ֆիրմայում աշխատանքային փորձի տևողությունը (տարիների քանակ)՝	
Ներկայիս պաշտոնը, ընկերությունում հանձնարարված պարտականությունների մանրամասները	
Համապատասխան փորձի համառոտ ներկայացում՝	
<p><i>Հավաստագրում.</i></p> <p>Ես, ներքոստորագրյալս, հավաստում եմ, որ վերոնշյալ տվյալները ճշգրիտ են և հաստատում եմ առաջարկվող աշխատանքները ֆիրմայի համար կատարելու իմ պատրաստակամությունը, եթե դրանք շնորհվեն ֆիրմային:</p>	
[Աշխատակցի ստորագրությունը]	Ամսաթիվ՝
Աշխատակցի լրիվ անունը	
[Ղեկավարի ստորագրությունը]	Ամսաթիվ՝
Ղեկավարի լրիվ անունը	

4 Հայտատուի տեխնիկական որակավորումները

Կարողությունները/Փորձը՝ Հայտատուի կողմից ձեռնարկված արևային ՖՎ էներգակայանների աշխատանքների և ծառայությունների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (ներառյալ ընթացիկ նախագծերը)

No.	Նախագծի անվանումը	Հաճախորդի անվանումը	Աշխատանքների շրջանակը	Պայմանագրի տևողությունը			Պայմանագրի արժեքը (\$ ԱՄՆ)/ ՀՀ դրամ	Նշումներ
				Մեկնարկի ամսաթիվը	Ավարտի ամսաթիվը	Փորձարկման ամսաթիվը		
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								

* անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ թերթեր

4.1 Լրացուցիչ հարցեր

4.1.1 Տրամադրեք այն աշխատանքների ցանկը, որոնց համար հավանական է ենթակապալառությունը:

4.1.2 Ներկայացրեք նախկինում նախագծերի շուրջ այդ ենթակապալառուների հետ աշխատանքի օրինակներ:

4.1.3 Ներկայացրեք “Արևային” պայմանագրերի առնչությամբ ձեր կազմակերպության փորձը և տրամադրեք վերջին օրինակները:

4.1.4 Խնդրում ենք տրամադրել ձեր հայտին աջակցող ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որը ցուցադրում է աշխատանքների ծավալը ժամանակին և ծախսարդյունավետ կերպով կատարելու ձեր կարողությունը:

5 Հայտատուի ֆինանսական կարգավիճակը

Մրցույթի մասնակիցը լիազորված է նշելու ընկերության տարեկան շրջանառությունը և զուտ բերված արժեքը վերջին 3 տարիների ընթացքում՝ աուդիտի ենթարկված հաշվեկշռի/ֆինանսական հաշվետվության հիման վրա:

Ֆինանսական տարի	Տարեկան շրջանառություն	Զուտ շահույթ
2017		
2016		
2015		